

**«ԲԱՍԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԵԹՈԴԸ
ԱՏՎԱԾԱՇԽԱԿԱՆ ԲՆԱԲԱՆՆԵՐԻ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՇԵՑՈՒ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Անուշ Մինայան

Փիլիստիայական զիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Փիլիստիայության,

սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Միջնադարյան հայ մտածող Հովհան Որոտնեցու (1315-1388 թթ.) գրական ժառանգությունն ընդգրկում է իմաստասիրական երկերի՝ Արիստոտելի «Կատեգորիաներ», «Մեկնության մասին»,Պորփյուրի՝ արիստոտելյան «Կատեգորիաներին» նվիրված «Ներածության» և Փիլոն Ալեքսանդրացու «Յաղագս նախախնամութեան» աշխատությունների վերլուծությունները, ինչպես նաև աստվածաշնչական մի շարք բնաբանների («Ի սկզբանէ եր Բանն. և Բանն եր առ Աստուած. և Աստուած եր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղև» [Յովհ.Ա.1, 3], «Ո ստեղծ առանձին զիրտս նոցա» [Սաղ.Լ.Բ.15], «Ի սկզբանէ Տեր զերկիր հաստատեցէր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ.Ճ.Ա.26], «Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսոսս, որ հաւատարիմ է արարչին իւրոյ» [Երրա.Գ.1], «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աշաց, երկիւղ Տեառն սուրբ է և մասյ յափառեան» [Սաղ.ԺԸ.9], «Տեր ի տաճար սուրբ իւրում, Տեր յերկինս յարոռ իւրում» [Սաղ.Ժ.5], «Մարդու եղև մահ, և մարդով՝ յարութիւն մեռելոց» [Ա Կորն.ԺԵ.21] և այլն) մեկնությունները¹:

¹ Աստվածաշնչական նշված բնաբանների մեկնությունները հրատարակվել են՝ Հովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ձատեր: Քննական բնագրեր, առաջարանը և ծանոթագրությունները Ա. Ա. Մինայանի, Եջմիածին, 2009: Հրատարակվել են նաև վերոնշյալ իմաստասիրական երկերի Որոտնեցու լուծունք-վերլուծությունները: Տե՛ս՝ Յովհաննու Որոտնեցոյ «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի, հավաքական տերսուր, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալյանի, ուսերեն թարգմ. Ա. Ա. Աղամյանի և Վ. Կ. Չալյանի, Եր., 1956: Յովհան Որոտնեցի, Համասատ լուծունք «Պերի արմենիա» գրոցն, քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Ա. Ա. Մինայանի, Եր., 2014: Յովհաննու Որոտնեցոյ Համասատ վերլուծութիւն «Պորփիրի դժուարացնիցն, «Յովհաննու Որոտնեցոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի» գրքում, էջ 298-315: Հաւաքում Յայտնաբանութեան ի Փիլոն իմաստնոյ՝ որ Յաղագս Նախախնամութեան յատաշին բանէ յերկասիրութեանց Յովհաննու Որոտնեցոյ լուսատը

Մեկնողական բնույթի վերոնշյալ աշխատություններում (վերնագրերում օգտագործվում են «վերլուծութիւն», «զուծմունք», «մեկնութիւն», «հաւաքրում» անվանումները) Հովհանն Որոտնեցին կիրառում է մեկնարանական մեթոդների և հնարների բավականին հարուստ գործիքարան, որոնք կոչված են հասկանալի դարձնել մեկնվող բնաբանը և խորապես բացահայտել դրան առնչվող հիմնախնդիրները: Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի որոտնեցիական մեկնություններում կիրառված մեկնողական եղանակների առանձնահատկությունները մեր կողմից ուսումնասիրվել և ներկայացվել են ընթերցողին²: Այս հողվածի նպատակն է բացահայտել և համակարգված ձևով ներկայացնել աստվածաշնչական բնաբանների մեկնություններում (քարոզներում) Հովհանն Որոտնեցու կողմից կիրառվող մեկնարանական մեթոդները:

Որոտնեցու քարոզներն ունեն հետևյալ կառուցվածքը.

ա) նախաբան,

բ) հայ առաքելական եկեղեցական դավանաբանության հիմնադրույթների շարադրանք (որոշ քարոզներում),

գ) բուն մեկնություն:

Քարոզների կառուցվածքային այս ուրվագիծը Որոտնեցին ձևակերպում է այսպես. «Բայց բե՛ր աստանոր սկիզբն արացցուք ըստ խոստման մերոյ նախերգարար յարդարել զբուխ երկոտասան ըստ ուղղափառ վարդապետութեան զլինելութիւն արարածոց: Եւ ապա զկնի նորին զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ արտադրեսցուք: Եւ զկնի այնորիկ ի մեկնութիւն բանիս ձեռնարկեսցուք զօրութեամբ Հոգույն Սրբոյ»³ (այս և հետագա ընդգծումները մերն են՝ Ա. Ա.):

Նախարանում Որոտնեցին քննարկում է բնաբանի հետ իմաստային առումով սերտորեն կապված (քառային մակարդակում այդ կապը կարող է թաքնված կամ թույլ արտահայտված լինել) մի շարք կարևոր հիմնահարցեր, որոնց արծարծումը նպատակ ունի գաղափարապես նախապատրաստել բուն մեկնությունը:

բարունապետի տեառն իմոյ, աշխատասիրութեամբ Օ. Վարդագարյանի, «Բաներ Մատենադարանի», Եր., 2006, թիվ 17, էջ 213-259:

² Տե՛ս Մինասյան Ա. Ա., Հովհանն Որոտնեցին՝ Արիստոտելի երկերի մեկնից, Ե., 2004, էջ 93-113. տե՛ս նաև՝ Մինասյան Ա. Ա., Արիստոտելի երկերի Հովհանն Որոտնեցու մեկնություններում կիրառված մեկնողական հնարները // «Բաներ Երևանի Համալսարանի», Եր., 1985, 2(86), 39-

⁴⁷ http://www.ysu.am/files/04A_Minasyan.pdf:

³ Հովհանն Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառակ, էջ 122, տե՛ս նաև՝ էջ 135:

Որոշ քարոզներում («Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն...», «Ո ստեղծ առանձին զիրտս նոցա», «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցէր և գործք ձեռաց քոց երկինք են» բնաբանների մեկնություններում) նախարանին հետևում է հայ առաքելական եկեղեցու դավանաբանական հիմնադրույթների եակիրճ ներկայացումը, իսկ «Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն...» բնաբանի մեկնության մեջ Որոտնեցին շարադրում է նաև դրանց վերաբերյալ եղած մոլորությունները և առաջադրում վերջիններիս հերքումները⁴:

Երրորդ, բուն մեկնողական բաժնում բառ առ բառ ներկայացվում և մանրազնին քննության են ենթարկվում աստվածաշնչական բնաբանի հասկացություններից յուրաքանչյուրը և, այդպիսով, աստիճանաբար՝ խճանկարի առանձին մասերի համադրվելու ձևով, աստվածաշնչական խոսքն ամբողջանում է, և բացահայտվում է դրա թաքնված խորհուրդը:

Այսպես, «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցէր և գործք ձեռաց քոց երկինք են» բնաբանի մեկնության նախարանում մեկնիչը տասներկու կետով համակարգային քննության է ենթարկում հետևյալ կարևոր հիմնախնդիրները՝ ի՞նչ է ստեղծելը, հնարավոր է արդյո՞ք ինչ-որ բան ստեղծել ոչնչից, միայն Աստված կարող է ստեղծել՝ թե՝ արարածները ևս ունակ են ստեղծելու, երկրային և երկնային մարմինները նույն նյութից են ստեղծված, ի՞նչ է նյութը և որո՞նք են դրա տեսակները, ի՞նչ է տեսակը և ինչպիսի՝ տեսակներ կան, ինչպես է Աստված նյութից ու տեսակից ստեղծել աշխարհը, ի՞նչ են տարրերը և ինչպես են կապվում միմյանց, ի՞նչ է անհրաժեշտ մարմինների բաղկացության համար, չորս տարրերը ինչպես են փոխարկվում շնչավոր և անշունչ մարմինների, արդյոք տարրերը ստույգ չորսն են և, վերջապես, ինչու են դրանք չորսը և ոչ ավելի կամ պակաս: Մեկնսող խոսքի խորհրդի և բովանդակության վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորմանը հետևում է քրիստոնեական եկեղեցական դավանաբանության հիմնադրույթների համակարգված շարադրանքը, «Եւ ի յաւարտ նախերգանիս բեր բուռն հարցուք և զիաւասոյ»: Իսկ բուն մեկնության մեջ Որոտնեցին արդեն անդրադառնում է բնաբանում արտահայտված հասկացությունների՝ «ի սկզբանէ», «տէր», «երկիր», իմաստի բացահայտմանը, այնուհետև բննում է «երկիրն ինչի վրա հաստատեց Աստված», «ի՞նչ է արտահայտում «և»

⁴ Տէ՛ս նույն տեղը, էջ 42-52, էջ 71-75, էջ 135-138:

բառը» հիմնահարցերը և, վերջապես, մեկնությունն ավարտում է «գործ» և «երկինք» հասկացությունների ծավալուն ուսումնասիրությամբ:

Աստվածաշնչից քաղված բնաբանների Հովհան Որոտնեցու մեկնությունների՝ առաջին հայացքից աչքի ընկնող հատկանիշներից է կուռ, ամբողջական, համակարգված շարադրանքը: Որոտնեցին մեթոդաբանորեն ճիշտ է համարում նախքան բովանդակային շարադրանքին անցնելը կետ առ կետ ներկայացնել առաջիկա ուսումնասիրության բաժիններն ու ենթաբաժինները, դասակարգել բնարկվելիք հիմնախնդիրները, այն, ինչը մերօրյա գիտական աշխատություններում կոչվում է «բովանդակություն» կամ «ցանկ»: Որոտնեցին իր այս մոտեցումը պատճառաբանում է այն հանգամանքով, որ այդկերպ մեկնության մեջ մատուցվող մտքերն ունկնդրի ականջին հաճելի, հեշտ ընկալելի են դառնում և դյուրանում է մեկնիչի մտքերի ընթացքին հետևելն ու այն յուրացնելը. «Բե՛ր նախ ի ձեռնարկ մեկնութեան աւետարանական և աստվածաբանական բանիս տրամատութիւն և կարգս զիխոց յարդարեսցուք առ ի դիւրագոյն մեզ լինել յընթացս բանի և հեշտալուր, սիրող և լսողունկան»⁵: Հարկ է նշել, որ մեկնության կամ շարադրանքի այս մեթոդը Արիստոտելի երկերի որոտնեցիական մեկնություններում հանդես է գալիս որպես «տեքստաբանական բաժանումներ» մեկնոդական հնար, երբ «մեկնիչը, ըստ այնմ, թէ ի՛նչ հիմնահարց է քննում բնագրի հեղինակը և ինչպէ՛ս, ի՛նչ եղանակով է նա իրականացնում իր քննությունը, մեկնվող երկի համապատասխան հատվածում կատարում է տեքստաբանական բաժանումներ»⁶: Պարզապես, եթե փիլիսոփայական երկի վերլուծության մեջ մեկնիչն առաջնորդվում է մեկնվող երկում քննվող հիմնախնդիրների կարգով ու հաջորդականությամբ և ըստ ա՛յդմ է կատարում իր բովանդակային բաժանումները, ապա Աստվածաշնչից քաղված հակիրճ բնաբանն ընդամենը ուղղորդող նշանակություն ունի, և այն թեմային առնչվող տարաբնույթ հիմնախնդիրներ առաջ քաշելու առումով որոշակի ազատություն է ընձեռում իմաստասիրող աստվածաբան-մեկնիչին:

Իր քարոզներում Հովհան Որոտնեցին գործածում է նաև իր փիլիսոփայական մեկնություններից հայտնի «ընդիմախտությունների եերքում» մեկնոդական հնարը, որը հնարավորություն է ընձեռում

⁵ Նույն տեղում, էջ 52:

⁶ Մինասյան Ա. Ա., Արիստոտելի երկերի Հովհան Որոտնեցու մեկնություններում կիրառված մեկնոդական հնարները, էջ 42:

միջնադարյան հայ մտածողին անդրադառնալ քննարկվող հիմնահարցի շուրջ տեսական գրականության մեջ շրջանառվող տեսակետներին՝ մի կողմից՝ հիմնական գծերով ներկայացնելով դրանք, մյուս կողմից՝ բազմակողմանի, համակարգված փաստարկմամբ հերքելով իր գաղափարահատական «հակառակորդների» տեսակետները: Տեսական ուսումնասիրության այս մեթոդի կիրառման տիպական օրինակ է աստվածաշնչական «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» բնաբանի մեկնությունը, որտեղ մեկնիչը, նախքան հոգու մասին իր ուսմունքը շարադրելի, ներկայացնում է հոգու մասին անտիկ իմաստասերների և եկեղեցական վարդապետների տեսակետները, ինչպես նաև դրանց հանգամանալից հերքումները: Հարկ է նշել, որ հոգու մասին ուսմունքների այս հիրավի հանրագիտարանային վերլուծությունն իր նախատիպը չունի հայ միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: «Աստվածաշնչան մի տողի մեկնությանը նվիրված հանրագիտարանային-հավաքաբանական այս աշխատության մեջ Տարեկի համալսարանի հիմնադիր ուսուցչապետը գերազանցապես անդրադառնում է հոգու և մարմնի բնության մասին միջնադարում հայտնի ուսմունքների, տեսակետների ու կարծիքների վերլուծությանը, որի ընթացքում առավել ակնհայտ են երևում քրիստոնեական և հեթանոսական, աղանդափրական, հերձվածողական ըմբռնումների տարբերությունները», - նկատում է Ս. Զարարյանը՝ անդրադառնալով հոգու մասին Հովհանն Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքին:

Որոտնեցու քարոզներում ամենից հաճախ կիրառվող ուսումնասիրության եղանակներից է տրամարանական «սահմանման» միջոցով ընդհանուր հասկացության ձևակերպումը, այնուհետև՝ «բաժանման» միջոցով տեսակների դասակարգումը և ի վերջո՝ խնդրո առարկայի կրնկրետացումն ու որոշակիացումը: Այս մեթոդը նոյնպես իր նախատիպն ունի Որոտնեցու փիլիսոփայական մեկնություններում՝ որպես «բացահայտում-բացատրություն» մեկնողական հնար, որի տեսական հիմքը սահմանման և բաժանման, ինչպես նաև հոմանունների մասին Արիստոտելի տրամարանական ուսմունքն է: Համաձայն արիստոտելյան «Հոմանունք ասին՝ որոց անուանք միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեանն՝ այլ»⁷ սահմանման՝ եթե տարբեր իրեր կամ երևույթներ նշանակվում են նոյն անուններով, մենք գործ ունենք

⁷ Զարարյան Ս., Հովհանն Որոտնեցի, Եր., 2017, էջ 78:

⁸ Ստորոգութիւնք Արիստոտելի // Կորին, Մամբեկ, Դավիթ, Վենետիկ, 1883, էջ 359:

«հոմանունության» հետ: Հստ այդմ Հովհան Որոտնեցին ձևակերպում է հոմանունների ուսումնասիրության հետևյալ սկզբունքը. «Եւ ի վերայ հոմանուանց գերիս զայսոսիկ պարտ է խնդրել. Նախ՝ թէ քանի նշանակութիւն ունի, երկրորդ՝ թէ յաղազս որոյ յ նշանակութեան է հանդէս, և ապա գերորդն՝ սահմանել կամ ստորագրել»⁹: Այսինքն՝ հոմանունների հանդիպելիս (գործնականում «հոմանուն» կարող է համարվել ցանկացած հասկացություն, եթե այն կոնկրետ, որոշակի իր կամ անձ չի նշանակում) պէտք է պարզել քանի հնարավոր իմաստները, ճշտել, թէ այն իր ո՛ր իմաստով է գործածված տվյալ ենթախորքում և ապա սահմանել քառ-հասկացությունն իր ճշտված նշանակությամբ: Նետաքրքրական է, որ նշված մեթոդի կիրառմամբ Որոտնեցին քննության է ենթարկում հենց «հոմանուն» հասկացությունը. «Այլ տեսցուք նախ՝ թէ ի՞նչ է հոմանուն, երկրորդ՝ թէ քանի նշանակութիւն ունի, երրորդ՝ թէ յաղազս որոյ է յառաջիկայս մեզ ի քննութիւն»¹⁰: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ Որոտնեցին սահմանման միջոցով ճշտելով սեռային հասկացությունը, բաժանման միջոցով թվարկում է վերջինիս տեսակները և տրամաբանորեն հանգում քննվող հասկացության՝ որուել կոնկրետ տեսակին պատկանելու եզրակացությանը: Երբեմն մեկնից շրջանցում է սահմանման պահանջը և միանգամից անցնում բաժանմանը կամ դասակարգմանը, այսինքն՝ հասկացության տեսակներն ու ենթատեսակները պարզելուն: Նշված մեթոդի կիրառմամբ Որոտնեցին բացահայտում-բացատրում է «հողի», «մահ», «սկիզբ», «հասարակ անուն», «մարզարեւութիւն»¹¹ և բազմաթիվ այլ հասկացությունների բովանդակությունը: Նշված մեթոդը, կարծում ենք, որոշակի առնչություն ունի նաև Դավիթ Անհաղթի կողմից ձևակերպված հայտնի մեթոդաբանական սկզբունքի հետ («Քայց զի ասէ ուն ի հանճարեղաց, թէ ամենայն իրողութիւնս զշորս զայսոսիկ խնդրել պարտ է՝ «Եթէ է», «զի նշ ե», և «որպիսի ինչ ե», և «վա սն եր ե»»¹²) և համապատասխանում է դրա երկրորդ և երրորդ կետերի պահանջներին: Դրանցով Անհաղթն առաջադրում է քննվող իրը անվանման կամ սահմանման միջոցով

⁹ Հովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 171:

¹⁰ Նույն տեղում, էջ 54:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 283: «զի նշ է հողի և ի քանի ս բաժանի», էջ 285: «զի նշ է մահ և ի քանի ս բաժանի», էջ 53: «զի նշ է սկիզբն և ի քանի ս բաժանի», էջ 54: «զի նշ է հասարակ անունն և ի քանի ս բաժանի և յաղազս որոյ է մեր քանս», էջ 138: «Զի նշ է մարզարեւութիւնն... Իսկ բաժանի մարզարեւութիւնն ի հինգ...» և այլն:

¹² Նույն տեղում, էջ 203, տե՛ս նաև էջ 183:

բնորոշելու և տարբերությունները բացահայտելու պահանջները. «Իրերի միջն գրյություն ունի ոչ միայն ընդհանրություն, այլև զանազանություն, որովհետև, օրինակ, կենդանիները ոչ միայն ընդհանրություն ունեն համապատասխան այն սեփի, որով ընդգրկվում են, այլև տարբերություն, որովհետև նրանցից ոմանք բանական են և ոմանք անբան, ոմանք մահկանացու են ոմանք անմահ: Հենց այդ պատճառով է, որ դրվում է **ինչպիսի՞ ինչ է հարցը...**¹³: Աստվածաշնչական բնարանների իր մեկնություններում Որոտնեցին բազմից դիմում է Դավթի կողմից ձևակերպված այս մեթոդաբանական սկզբունքին:

Իր քարոզներում Որոտնեցին կիրառում է նաև փիլիսոփայական մեկնություններում գործածական «**առեսաբանում-համեմատություն**» մեկնողական հնարք, երբ մեկնիչը որևէ առանցքային հասկացության ընտրյա բացահայտում է՝ այն առնչակից հասկացության հետ համեմատելու՝ ընդհանություններն ու տարբերությունները վեր հանելու միջոցով. «Նախ ասասցուք գորքանութիւն հասարակութեան բանին Աստուծոյ և մարդոյ, և ապա յետ այնորիկ արտադրեսցուք զգանազանութիւն նոցին»¹⁴, «Բե՛ր տեսցուք, թէ ի և զանազանի գործք մարդոյ ի գործոց Աստուծոյ»¹⁵, «Իսկ թէ զի՞նչ զանազանութիւն է ի մեջ իմացականին և ի մեջ բանականին»¹⁶ այլն: Նշված մեթոդը ևս առնչություններ ունի հումանունների, սեռային և տեսակային հասկացությունների վերաբերյալ Արիստոտելի տրամաբանական ուսմունքի հետ:

Աստվածաշնչական բնարանների մեկնություններում Որոտնեցին շատ հաճախ առաջարրում է տրամաբանորեն հիմնավորված տեսական պատճառաբանություններ՝ հօգուտ առաջադրված հիմնադրութիւնի¹⁷ կամ, ի պատճառական ճշգրտող հարցի՝ շարադրում է ուսումնասիրվող երևույթի բնույթն ու առանձնահատկությունները բացահայտող իր հիմնավորմանները: Այս կարգի լուծումների առանձնահատկությունը Որոտնեցին ներկայացնում է այսպես. «Գիտել արժան է, յայսպիսի գործառնութիւնս նախ և առաջին զարմատոյ և զիհմանէ սոցա բուռն

¹³ Դավիթ Անհաղթ, Փիլիսոփայության սահմանումները // Երկեր, Եր., 1999, էջ 22:

¹⁴ Հովհանն Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 65:

¹⁵ Նոյն տեղում, էջ 169:

¹⁶ Նոյն տեղում, էջ 184:

¹⁷ Օրինակ՝ «վա՞ն էր զակիզբն ի Բանն եղ և ոչ ի Հայր», «ընդէ՞ր զանուն Որդոյ ոչ ասաց» (էջ 62), «վա՞ն էր եղաք անձնիշխան» (էջ 111), «վա՞ն էր չորեսին տարր կոչին» (էջ 129) «վա՞ն էր չորս են տարերը, և ոչ աւելի կամ նուազ» (էջ 135) և այլն:

հարկանել պարտ է, զի կատարելապէս զիրին զատուգութիւնն ծանիցուք»¹⁸, այսինքն՝ հետագրուվող առարկայի ստույգ եռյալունը, բնույթը առավելագույնս բացահայտելու համար անհրաժեշտ է ի հայտ բերել դրա հիմքն ու արմատը: Նշված մեկնողական հնարի կիրառմամբ Որոտնեցին պատճառարանություններ և հիմնավորումներ է առաջարրում մի շարք հարցադրումների՝ «քան մարդոյ ի հարկաւորացն է,թէ ի հնարաւորացն»¹⁹, «Եռյալն առաւել ստորոգի ի վերայ Աստուծոյ, թէ՝ անեղութիւն»²⁰, «որովհետև առաւել ստորոգի անեղութիւնն ի վերայ Աստուծոյ, քան Եռյալն» խնդրեսցուք, թէ սահմանաբար ստորոգի»²¹, «ծովը ի ակզբանէ էին աղտադտուկ և դառն, որպէս այժմ»²², «յերկիրս յէ՞ր վերայ հաստատեաց Աստուծած»²³ և այլն:

Եվ, վերջապէս, իր քարոզներում «ընդհանրացումներ և հետևություններ» մեկնողական հնարի կիրառումը թույլ է տալիս Որոտնեցուն տրամաբանական օրինաչափությունների՝ դավանաբանական, աստվածաբանական հիմնադրույթների վրա «տարածման» (Էքստրապոլյացիայի) միջոցով հանգել որոշակի եզրակացությունների: Այսպէս, անդրադառնալով աստվածային անվանումների հիմնախնդրին՝ Որոտնեցին նախ ներկայացնում է անվան տեսակներն ընդհանրապէս. անուններ, (1) որոնք ասվում են, սակայն չկան այն իրերը կամ հատկանիշները, որոնք նշանակվում են այդ անվանմամբ՝ «որպէս եղջերուաքաղն ու արալեզը», (2) որոնք ասվում են և կա ն այն իրերը կամ հատկանիշները, որոնք նշանակվում են այդ անվանմամբ՝ «որպէս մարդ, ձի, արծուի», (3) որոնք ո՛չ ասվում են, և ո՛չ էլ կան այն իրերը կամ հատկանիշները, որոնք նշանակվում են այդ անվանմամբ՝ «որպէս ոչ եքն», (4) որոնք չեն ասվում, թեև իրականության մեջ գոյություն ունեն դեռևս անվանում չստացած իրերը կամ հատկանիշները՝ «որպէս այնք, որ ի խորս ծովու և յանկոխ և երիխն...»: Ապա Որոտնեցին ասվածք ընդհանրացնելով աստվածային անվանումների նկատմամբ՝ գրում է. «Այսպէս ծանիր և յաղագու

¹⁸ Նույն տեղում, էջ 55:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 37:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 157:

²³ Նույն տեղում, էջ 159:

Աստուծոյ...», և նույն տրամաբանությամբ բնութագրում է աստվածային անվանումների չորս «զուգահեռ» տեսակները²⁴:

Այսպիսով, աստվածաշնչական բնաբանների մեկնություններում Հովհան Որոտնեցին կիրառում է «հիմնախնդիրների դասակարգում», «ընդդիմախոսությունների հերքում». «բացահայտում-բացատրություն», «տեսաբանում-համեմատություն», «պատճառաբանում-հիմնավորում», «ընդհանրացումներ և հետևողություններ» մեկնողական հնարները: Դրանք բոլորն կ լայնորեն օգտագործվում են նաև Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Հովհան Որոտնեցու մեկնություններում և մեր կողմից միավորվում են գիտահետազոտական բնույթի մեթոդների խմբում (ի տարբերություն ուսումնակրթական բնույթի մեկնողական հնարների)²⁵:

Գիտահետազոտական բնույթի վերոնշյալ հնարներին զուգահեռ՝ աստվածաշնչական բնաբանների մեկնություններում Հովհան Որոտնեցին կիրառում է նաև Աստվածաշխի հիմնադրույթները որպես «ծանրակշիռ» փաստարկ մեջբերելու՝ աստվածաբանական-դաշտական գրականության մեջ ընդունված կանոնակարգը: Այսպես, համարելով, որ Աստծու տունն ու տաճարը չորսն են՝ առաջին՝ աշխարհը, երկրորդ՝ Մովսեսի աղոթքատեղին՝ «վրան ժամուն», երրորդ՝ սուրբ եկեղեցին, չորրորդ՝ «մարդն կենդանի՝ որ է աշխարհ երկրորդ ի վերայ երկրի»²⁶, Որոտնեցին այս կետերից յուրաքանչյուրի իր փաստարկումները սկսում է հենց Աստվածաշնչից քաղված մեջբերումներով²⁷: Որպես հեղինակավոր տեսակետ՝ Հովհան Որոտնեցին դիմում է նաև եկեղեցու հայրերի և հայտնի աստվածաբանների կարծիքին, փաստարկման եղանակ, որը նույնպես լայնորեն կիրառվում էր միջնադարյան եկեղեցական գրականության մեջ: Սակայն, հարկ է նշել, որ եկեղեցական վարդապետություններին զուգահեռ, Որոտնեցին հաճախակի մեջբերում է նաև հայտնի իմաստասերների տեսակետները, ընդ որում, նա կարող է բավականին բննական մոտեցում դրսնորել թե՝ «ներքին», և թե՝ «արտօարին» վարդապետների արտահայտած կարծիքների նկատմամբ: «Եւ նախքան

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 146:

²⁵ Տե՛ս Մինասյան Ա. Ա., Արիստոտելի երկերի Հովհան Որոտնեցու մեկնություններում կիրառված մեկնողական հնարները, էջ 46-47:

²⁶ Տե՛ս Հովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ձատեր, էջ 239:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 239, 249-250, 254, 257-258:

զամենայն յիմաստասիրութիւն քննութեան հոգոյն պարտիմը զկարծիս տարբեր, որ յաղագու հոգուց մարդկան՝ եթէ յարտաքնոցն է և եթէ ի ներքնոց, արտադրել թուով տասն և զկնի զգշմարտութիւնն հաստատել...»²⁸, - գրում է Հովհան Որոտնեցին՝ հասկացնելով, որ արտահայտված տեսակետները և վերջնական եզրահանգումը («Ճշմարտութիւնն») կարող են տարբերվել՝ անկախ դրանց հեղինակի՝ իմաստասեր կամ հոգևորական լինելու փաստի:

Այսպիսով, աստվածաշնչական բնաբանների որոտնեցիական մեկնություններում դավանաբանական, աստվածաբանական գրականության մեջ ընդունված՝ Աստվածաշնչի և եկեղեցու հայրերի հեղինակությանը հիմնվող շարադրանքի ընդունված կանոնակարգին գուգահեռ, զգալի չափով կիրառվում են նաև գիտահետազոտական բնույթի մեկնողական հնարներ, որոնք մեծապես առնչվում են Արիստոտելի տրամաբանական ուսմունքի հետ: Բանի այն է, որ Հովհան Որոտնեցին Արիստոտելի տրամաբանական ուսմունքի կառուցվածքային ձևերն ընկալում է որպես հիմնավորված, գիտականորեն ընդունելի կշռադատության համապարփակ եղանակներ, որոնցով կարող են կառուցվել նաև աստվածաբանական հիմնախնդիրների մեկնությունները: Այսինքն՝ ճիշտ այն գործառնությամբ, որ Արիստոտելի տրամաբանությանը անդրադառնալիս ակադեմիկոս Հ. Գևորգյանը նկարագրում է հետևյալ կերպ. «Տրամաբանական կառուցվածքային ձևերը (մասնավորապես սահմանման, բաժանման և մտահանգման) որոշակի սինեմաներ, տիպարներ են, որոնց համաձայն ընթանում է կշռադատությունը՝ ձեռք բերելով հիմնավորվածություն (որ ճշմարտության ձևական կողմն է): Սահմանման, բաժանման ու մտահանգման կանոններին համապատասխան կառուցված (այսինքն՝ հիմնավոր) կշռադատությունն ընկալվում է որպես «ընդունելի», «համոզիչ»²⁹: Փաստորեն, աստվածաշնչական նյութը «ընդունելի» և «համոզիչ» դարձնելու նպատակով Որոտնեցին ձգտում է «հիմնավոր», այսինքն՝ տրամաբանական օրինաշափություններին համապատասխանող կշռադատությունների: Տեսաբանման այս կերպը Հովհան Որոտնեցին կոչում է «բնական բանականությամբ» կամ «գանական արուեստի» արված մեկնություն: Ըստ որում, բանականության «զորեղ զենքի» կամ

²⁸ Հովհան Որոտնեցի. Մեկնողական-իմաստասիրական ձառեր, էջ 75:

²⁹ Գևորգյան Հ.Ա., Գիտելիքի վերլուծության հարցերը Արիստոտելի Երկրորդ անալիտիկայում // Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, էջ 54:

արիստոտելյան տրամաբանական ուսմունքի կիրառումը աստվածաբանական մեկնություններում Որոտնեցին համարում է ոչ միայն թույլատրելի, այլև անհրաժեշտ. «Նախ պարտիմք բանական արուեստի ներածիլի ի մակացութիւն աստվածաբանական իմաստից»³⁰:

Անդրադառնանք Հովհան Որոտնեցու կողմից «բնական բանականության» մեթոդի կիրառման մի բանի հատկանշական դեպքերի:

«Ի սկզբանն էր բանն...» աստվածաշնչական դրույթի մեկնության մեջ Որոտնեցին, թվարկելով աստվածային անվանումները և պարզելով դրանց՝ Աստծու նկատմամբ գործածվելու առաջնահերթությունները, այնուհետև հարկ է համարում «ելանել մեզ ի բարձրագոյն զահաւանդակս, տեսանել, թե է ճշմարիտ նշանակութիւն եռթեան անուանքս այս: Եւ հաստատի ի ձեռն վեց առաջարկութեանց բնական բանականութեամբ...»³¹: Որոտնեցին առաջարրում է Աստծու գոյության վեց փաստարկ, որոնք հիմնվում են իրական աշխարհի օրինաշափությունների (հակադրությունների պայքար և միասնություն, անդադար շարժում (հիմնավորվում է առաջին շարժիչ մասին Արիստոտելի ուսմունքով), անհրաժեշտություն (բնեցվում է անհրաժեշտ մոդալականության մասին Արիստոտելի տրամաբանական ուսմունքը), կատարելության տարբեր աստիճաններ, կարգ, ներդաշնակություն ու գեղեցկություն, պատճառահետևանքային կապեր (նշվում է չորս պատճառների մասին Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքը)՝ հաստատուն ու անփոփոխ սկզբնապատճառ ունենալու անհրաժեշտության սկզբունքի վրա: Նույն՝ «բնական բանականության» մեթոդի կիրառմամբ Որոտնեցին հիմնավորում է նաև Աստծու՝ մեկը և միակը լինելու գաղափարը³²: Այս դեպքում, ի լրումն նշված սկզբունքի, Որոտնեցու փաստարկները կառուցվում են հակառակ պնդման («թէ լինեին բազում աստուածք») ընդունման հետևանքով ակնհայտորեն սխալ հետևությունների հանգելու տրամաբանական մեթոդով³³:

Մի այլ դեպքում, անդրադառնալով աստվածային արդարության հիմնախնդիրին, Որոտնեցին դարձյալ անհրաժեշտ է գտնում դիմել «բնական բանականության» մեթոդին («Այլ նախքան զբանս հետեւեցուք

³⁰ Նույն տեղում, էջ 207:

³¹ Տես նույն տեղում, էջ 39-41:

³² Տես՝ նույն տեղը, էջ 41-42:

³³ Այս հիմնախնդիրի փաստարկման համակարգում Որոտնեցին վերջին՝ վեցերորդ կետում օգտագործում է Աստվածաշնչի հանրահայտ հիմնադրույթները՝ որպես փաստարկ մեջերելու մեկնաբանության եղանակը:

բնական քննութեանց...»³⁴): Վկայակոչելով Դավիթ Անհաղթի հայտնի մերոդարձանական սկզբունքը՝ նա ըստ այդմ էլ մեկնաբանում է աստվածային արդարությունը. «Բե՛ր այժմ հետեւեցուք բնական իմաստասիրացն ոճոյ. ի վերայ արդարութեան նախ խնդրեսցուք՝ թէ է՛ արդարութիւն, և ի՞նչ է, և որպիսի ի՞նչ է, և վա՞սն էր է»³⁵:

Շարունակելով ճառել աստվածային արդարության մասին՝ Հովհան Որոտնեցին կիրառության մեջ է դնում Արիստոտելի ուսմունքը կատեգորիաների վերաբերյալ: «Արիստոտել զամենայն գոյս ի տասն բաժնների, ստորոգութիւնս մակազրէ, բայց Օլոմափարորոս փիլիսոփայն զօրսն միայն դնէ պարզ ստորոգութիւն, իսկ զայլ վեցն դնէ շարամանութեամբ գոյանալ,- գրում է Որոտնեցին և շարունակում,- իսկ ի սոցանէ գոյացութիւնն միայն ասի ի վերայ Աստուծոյ, իսկ այլըն՝ որակն և քանակն՝ ո՛չ զի Աստուած անտրակ և անքանակ է: Բայց ըստ կերպի ինչ, որպէս ի վերայ ստորևնայոց, ասի»³⁶: Փաստորեն, արձանագրելով հանդերձ եկեղեցական ընդունված տեսակետն այն մասին, որ Աստծո նկատմար «գոյացութիւն»-ից բացի մնացած կատեգորիաները կիրառելի չեն, Որոտնեցին չի դիմանում թեկուզ պարզ կատեգորիաներով աստվածային եռթյունը բացահայտելու «ինստելեկտուալ գայթակղությանը»: Հիմք ընդունելով, որ գոյացությունը նույնության պատճառ է, որակությունը՝ նմանության, իսկ քանակությունը՝ հավասարության, Հովհան Որոտնեցին եզրակացնում է. «Աստուածային անձինքն ըստ գոյացութեան ունին զնոյնութիւն բնութեան յախտենական, զգօրութիւն ամենակատար՝ ըստ նմանութեան, զմեծութիւն՝ ըստ հաւասարութեան»³⁷: Այսուհետև նա լրացնուիշ ճշգրտումներ է մտցնում Աստծու քանակական բնութագրի մեջ, հավելելով, որ ինչպես ստեղծվածներին հատուկ է մեծության երեք եղանակ՝ ըստ ժամանակի, ըստ չափի և ըստ կարողության, համապատասխանաբար աստվածային անձերն էլ ունեն երեք տիպի հավասարություն. անփոփոխ գոյության հավիտենականություն, անշափելի մեծություն և կատարյալ կարողություն: Հարաբերության կատեգորիան, ըստ Որոտնեցու, վերաբերում է Սուրբ Երրորդությանը՝ որպէս Հայր և Որդի, Բխող և Բխյալ: Այս կատեգորիային բնորոշ է միաժամանակյա գոյության հատկությունը և, ըստ այդմ, Եղակ անձերն

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 183:

³⁵ Նոյն տեղում, էջ 204:

³⁶ Նոյն տեղում, էջ 207:

³⁷ Նոյն տեղում, էջ 207:

ունեն միաժամանակյա գոյություն՝ ըստ Եղիշյան, ըստ մեծության և ըստ կարողության:

Ինչպէս տեսնում ենք, Հովհան Որոտնեցին Արիստոտելի տրամաբանական ուսմունքի ոգով վերլուծություններ և մեջնաբանություններ է կատարում ավանդաբար բանական բնության ենթակա չիամարփող քրիստոնեական այնախսի «անառարկելի ճշմարտություններ» մեջնաբաննելիս, ինչպիսիք են Աստծո բնության և Եղիշյան, Աստծո Եղակ միասնության հիմնադրույթները:

Փաստորեն «քնական բանականության» որոտնեցիական մեթոդի «գործիքարանում» ներառված են Արիստոտելի տրամաբանական ուսմունքի կարևորագույն սկզբունքներն ու օրինաչափությունները, տրամաբանական անհակասականության, նույնության, երրորդի բացառման, բավարար հիմունքի օրենքները, ինչպէս նաև Դավիթ Անհաղի կողմից ձեակերպված՝ դարձյալ Արիստոտելից իմացաբանական-տրամաբանական ուսմունքից բխող, օրյեկտիվ վերլուծությունների համար պահանջվող կանոններ, որոնք ցանկացած ուսումնասիրության «գիտականության» պահովման պայմաններից են: Տեսաբանման այս հիմնաբար սկզբունքները սերտորեն առնչվում են փիլիսոփայական երկերի և աստվածաշնչական բնաբանների Հովհան Որոտնեցու մեկնություններում կիրառվող «գիտահետազոտական» բնույթի մեկնողական հնարների հետ: Հենց սա է Հովհան Որոտնեցու ոացիոնալիստական աշխարհայցքի հիմքն ու աղյուրը. Արիստոտելի տրամաբանական ուսմունքը ոչ թե սուկ մասնավոր գիտակարգ դիտարկելը, այլ որպես ցանկացած մեկնության, վերլուծության համապարփակ մեթոդ, գիտական ուսումնասիրության համընդհանուր եղանակ կիրառելը:

ԱՍՓՈՓՈՒՄ

Աստվածաշնչական բնաբանների մեկնություններում Հովհան Որոտնեցին (1315-1388) Սուլք Գրքի հիմնադրույթներին և եկեղեցու հայրերի ու նշանավոր աստվածաբանների հեղինակավոր տեսակետներին զուգահեռ իր փաստարկման համակարգում կիրառում է նաև գիտահետազոտական բնույթ ունեցող մի շարք մեկնողական հնարներ, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է առանձնահատուկ գործառնություն, լրացն է ուրույն խնդիր: Դրանք սերտորեն կապված են «քնական բանականության» որոտնեցիական մեկնողական մեթոդի հետ,

որի դեպքում Արիստոտելի տրամաբանական ուսմունքի հիմնադրույթներն ու կառուցվածքային ձևերը կիրառվում են աստվածաշնչական դրույթները մեկնաբանելիս: Այդպիսով միջնադարյան հայ մտածողը ձգտում է արիստոտելյան տրամաբանության սկզբունքներին ու կանոններին համապատասխանող կշռադասությունների միջոցով ապահովել քիստոնեական դավանաբանության և աստվածաբանության «գիտական հիմնավորվածությունը»:

Բանալի քառեր. միջնադարյան հայ փիլիսոփայություն, Արիստոտելի տրամաբանական ուսմունք, մտքի կառուցվածքային ձև, Հովհան Որոտնեցի, մեկնություն, քարոզ, դավանաբանություն, աստվածաբանություն, գիտականություն:

МЕТОД “ЕСТЕСТВЕННОГО РАЗУМА” В ТОЛКОВАНИЯХ ПОЛОЖЕНИЙ БИБЛИИ ИОАННА ВОРОТНЕЦИ

Ануш Минасян

*Кандидат философских наук,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В библейских толкованиях Иоанна Воротнечи (1315-1388), наряду с положениями Святого Писания и авторитетными мнениями отцов церкви и видных теологов используются также ряд приемов экзегезы научно-исследовательского характера, каждый из которых представляет собой реализацию специфической функции, решение особой задачи комментирования, интерпретации, толкования. Все они тесно связаны с толковательным методом «естественного разума» Воротнечи, согласно которому основоположения и структурные формы логического учения Аристотеля применяются в целях толкования доктринальных положений Библии. Таким образом, средневековый армянский мыслитель стремится посредством рассуждений, выстроенных в соответствии с принципами и законами аристотелевской логики обеспечить «научную обоснованность» христианской доктрины и богословия.

Ключевые слова: средневековая армянская философия, логическое учение Аристотеля, структурная форма мысли, Иоанн Воротнечи, толкование, проповедь, доктрина, богословие, научность.

**THE METHOD OF "NATURAL REASON"
IN THE INTERPRETATIONS OF BIBLICAL PROVISIONS
BY HOVHAN VOROTNETSY**

Anush Minasyan

*Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

In the biblical interpretations by Hovhan Vorotnetsy (1315-1388), in line with provisions of the Holy Scripture and authoritative viewpoints of fathers of the church and renowned theologians, a number of exegesis techniques of academic-research nature are employed, each of which performs a specific function, and deals with a specific task. They are all closely linked with Vorotnetsy's interpretation method of "natural reason", according to which the provisions and structural forms of Aristotle's logical doctrine are applied in interpreting biblical provisions. Thus, the medieval Armenian thinker strives to ensure the "academic justification" of the Christian dogmatics and theology via judgments in conformity with the laws and rules of Aristotelian logic.

Key words: Medieval Armenian Philosophy, Aristotelian logic, structural form of thought, Hovhan Vorotnetsy, interpretation, preaching, dogmatics, theology, academic content, science.

**ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՋՄԻ ՄՎԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Լիլիթ Սարգսյան
Փիլիտփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիտփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ակադ գիտաշխատող**

Հայաստանի Հանրապետության քաղաքական ներկա գործներացները միտված են խորհրդարանական կառավարման ձևաչափի կայացմանը՝ ժամանակի պահանջներին համապատասխան։ Այս համատեքսում էական նշանակություն ունի հետազոտել XIX դարում ծավալված արևմտահայ սահմանադրական շարժման